«Ավտովերակնքում» ծառայության պայմաններ

1. «Ավտովերակնքում» ծառայությունը ՝ Ֆիզիկական անձանց մատուցվող «Wi-Fly տարեկան» և «All in տարեկան» ծառայությունների/սակագնային փաթեթների եվս (1 (մեկ) տարով) ավտոմատ վերակնքման ծառայություն է:

1.1. Բաժանորդը (թե՛ գործող, թե՛ նոր) միանալով «All in տարեկան» և «Wi-Fly տարեկան» ծառայությունների/սակագնային փաթեթներին՝ 1 տարի պարտադիր բաժանորդագրության պայմանով, ավտոմատ համաձայնում է իր պայմանագրի ավտոմատ վերակնքմանը ևս 1 (մեկ) տարով (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր) ժամկետով: Այսինքն՝ 1 (մեկ) տարի (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր) անց, Բաժանորդի պայմանագիրը վերակնքվում է ևս 1 (մեկ) տարի (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր) պարտադիր ժամկետով և Բաժանորդը շարունակում է ստանալ տարեկան բաժանորդագրության պայմաններով նախատեսված մատուցվող Ծառայությունների առավելությունները:

1.2. Բաժանորդը կարող է հրաժարվել «Ավտովերակնքում» ծառայությունից ցանկացած **օր 1 (մեկ) տարվա (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրվա) ընթացքում** (այդ թվում՝ Բաժանորդագրության պահին)՝ ներկայացնելով դիմում Օպերատորի վաճառքի և սպսարկման սրահներում կամ «Հեռախոսային սպասարկում» ծառայության միջոցով:

Եթե Բաժանորդը հրաժարվում է «Ավտովերակնքում» ծառայությունից ապա 1 (մեկ) տարի (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր) անց, պայմանագիրը ավտոմատ կերպով չի վերակնքվում ևս 1 (մեկ) տարով (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրով), Բաժանորդի պայմանագիրը դառնում է անժամկետ և սկսում են գործել «Wi-Fly» և « «All in» ծառայությունների/սակագնային փաթեթների անժամկետ բաժանորդագրության պայմանները: «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ աշխատակիցը պարտավորվում է Բաժանորդին տեղեկացնել, որ «Ավտովերակնքում» ծառայությունից հրաժարվելու դեպքում 1 (մեկ) տարի (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր) անց սկսելու են գործել սույն կետում նշված «Wi-Fly» և « «All in» ծառայությունների/սակագնային փաթեթների անժամկետ բաժանորդագրության պայմանները

1.3. «Ավտովերակնքում» ծառայությունից հրաժարվելուց հետո Բաժանորդը ցանկացած օր կարող է կրկին դիմել «Ավտովերակնքում» ծառայությունը ակտիվացնելու համար՝ ներկայացնելով դիմում Օպերատորի Վաճառքի և սպսարկման սրահներում կամ «Հեռախոսային սպասարկում» ծառայության միջոցով:

1.4. Եթե Բաժանորդը 1 (մեկ) տարվա (365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրվա) ընթացքում չի ներկայացնում դիմում «Ավտովերակնքում» ծառայությունից հրաժարվելու վերաբերյալ և Բաժանորդային պայմանագիրը ավտոմատ վերակնքվում է, ապա չեղարկել 1 տարի պարտադիր բաժանորդագրությունը հնարավոր չէ մինչև պարտադիր տարեկան բաժանորդագրության ժամկետի ավարտը (այսինքն՝ եթե պայմանագիրն արդեն ավտոմատ վերակնքվել է, այն չեղարկել հնարավոր չէ, բայց Բաժանորդը կարող է

հրաժարվել «Ավտովերակնքում» ծառայությունից սույն հրամանի 1.2. կետում նշված կարգով՝ հաջորդ ժամանակահատվածի համար):

1.5. Գործող բաժանորդը կարող է միանալ յուրաքանչյուր նոր հատուկ առաջարկի[1]՝ վերակնքելով գործող պայմանագիրը՝ 1 տարի պարտադիր բաժանորդագրության պայմանով: Այս դեպքում, անկախ նրանից, արդյոք «Ավտովերակնքում» ծառայությունը ակտիվացված է եղել նախորդ տարեկան պայմանագրի շրջանակներում, թե՝ ոչ, երբ գործող Բաժանորդը վերակնքում է իր գործող պայմանագիրը, ապա նախորդ տարեկան բաժանորդագրության շրջանակում ակտիվացված «Ավտովերակնքում» ծառայության ժամկետը ապաակտիվացվում է և նոր տարեկան բաժանորդագրության շրջանակում ակտիվանում է «Ավտովերակնքում» ծառայության նոր ժամկետ:

2. Բաժանորդի «Ավտովերակնքում» Ծառայության ակտիվացման/ապաակտիվացման ծանուցման ընթացակարգ

2.1. Տարեկան պայմանագրի ընթացքում/ավարտին մոտ բաժանորդը ստանում է ավտոմատ SMS ծանուցումներ: Բաժանորդին Օպերատորի կողմից ուղարկվում է երկու հատ հաղորդագրություն վերջինիս կողմից նշված բջջային հեռախոսահամարին ՝ մինչև տարեկան բաժանորդագրության ավարտը:

2.2. Առաջին հաղորդագրությունը ուղարկվում է տարեկան բաժանորդագրության ժամկետի ավարտից 30 օր առաջ, 2-րդ հաղորդագրությունը՝ տարեկան բաժանորդագրության ժամկետի ավարտից 15 օր առաջ:

2.3. Ուղարկվող հաղորդագրության տեքստը տարբեր է լինում՝ կախված նրանից, թե արդյոք բաժանորդը հաղորդագրության ծանուցման օրը արդեն ակտիվացրել է «Ավտովերակնքում» ծառայությունը, թե՝ ոչ:

[1] Հատուկ առաջարկ, որը հասանելի է գործող բաժանորդների համար: